

- Հ.
 11 Մի ոչխար եւ երկու գառն՝ նուէր պ. Յակովբայ Բեֆճեան
 12 Մի ոչխար եւ մի գառն՝ նուէր պ. Յովհաննու Ս. Յովհաննիսեան Հին Ղրի-
 մեցւոյ
 13 Հինգ ոչխար եւ հինգ գառն՝ նուէր պ. Մկրտչի Վսկայթումեան Հին Ղրի-
 մեցւոյ
 14 Մի գառն՝ նուէր տ. Աննայի Հալաճեան
 15 Մի գառն՝ նուէր տ. Հռիփսիմէի Սաղիմեան
 16 Մի ոչխար՝ նուէր պ. Նիկողայոսի Վարդանեան
 17 Մի ոչխար՝ նուէր պ. Ալեքսանի Յովհաննիսեան Հին Ղրիմեցւոյ
 18 Տասն եւ մի գառն՝ յուխտաւորաց ի տօնի Վերացման ս. Խաչի մնա-
 ցեալք յօգուտ վանիցս ի 55 մատաղաց. —

Վանահայր՝ Նահապէս վարդապետ.

ՅԱԽԷՐԺԱՀԱՐՍԸ, Պուսկիւնի, Թարգմ.
 Կ. Կրասիլնիկեանի*:

Մեր գրականութեան մէջ հաւատար ըստ չունին առան-
 ձին գրքով հրատարակուած և պարբերական մամուլի մէջ զե-
 տեղուած աշխատութիւնները: Առաջինների համար գրախօսու-
 թիւն կայ, իսկ միւսները գրեթէ լռութեան են մատնւում:
 Հէնց այս հանգամանքը ցոյց է տալիս, որ մենք աւելի սովորու-
 թեան ենք հետեւում, քան լուրջ կերպով կատարում ենք մեր
 պարտականութիւնը դէպի ընթերցողները, ուստի և հատկանալի
 է, թէ ինչու նոյն իսկ մեր գրախօսութիւնը առհասարակ աւելի
 ձև և շաբլոն է, քան բարեխիղճ ուսումնասիրութիւն:

Այն ինչ, պարբերական մամուլն էլ այնպիսի երեւոյթներ է
 ներկայացնում, որ ընթերցողների համար հետաքրքրական պիտի
 լինին:—Ես ուզում եմ անցեալ տարուայ «Մուրճի» երեք յօդուած-
 ների մասին խօսել, որոնք, ինչպէս կարծում եմ, մեր գրակա-
 նութեան հարօտութիւնն են կազմում. 1) Վերնագրիս մէջ ա-
 նուանած պ. Կրասիլնիկեանի Թարգմանութիւնը. 2) Լալուարի որ-
 սը, հեղ. Վ. Միրաբեանի, և 3) Սերոբեկց ածերը, հեղ. Ա. Շահնա-

գարեանի: Իմ այսպիսի ընտրութիւնը աւելի պատահական է, քան ջոկած: «Մուրճը» իւր տգեղ և անհասկանալի կողմերն ունի, բայց ես առանձին զուարճութեամբ ուզում եմ խօսել նորա մի քանի աչքի ընկնող բանասիրականների մասին: Առ այժմ «Յաւերթահարսի» թարգմանութեան մասին:

Թարգմանիչը մի քանի անգամ հանդէս է եկել «Մուրճում» քնարերգական փոքր հատուածների թարգմանութիւններով, որոնց մէջ յայտնի երևում էր, որ այս պարոնը մի նոր երևոյթ է մեր գրականական հորիզոնում: Եթէ նա առաջ էլ գրականական ասպարէզումն է եղել, խոստովանում եմ, ինձ յայտնի չի եղել: Այժմ նա աւելի քաջութեամբ առաջ է գալիս նոր նուէրով՝ թարգմանելով Պուշկինի драматич. очерк-ներից մէկը, որ «Մուրճի» կազմի վերայ անուանած է պոեմա, երևի գրաշարի խելքով: Այսպէս գնալով, մենք յանձին Կրասիլնիկեանի կունենանք հայոց ժողովուրդի, և երևի թէ վաղ կամ ուշ նա մեզ կընծայէ զոր օր. Լոմերոսի աշխարհաբար թարգմանութիւնը: Տայ Աստուած:

«Յաւերթահարսի» թարգմանութիւնը առանձին դժուարութիւններ է ներկայացնում, նախ նա բարձր արուեստի բանաստեղծութիւն է, Պուշկինի բանաստեղծութիւն, երկրորդ՝ ժողովրդական բանաստեղծութիւն է, իսկ հայոց աշխարհաբարը տակաւին տղայական վիճակումն է: Թարգմանիչը, պատկառելով մեծ բանաստեղծից, պէտք է ճնշուի, ուստի և գրեթէ պիտի ստրկանայ և բառացի թարգմանող դառնայ. իսկ ուր որ կը խլիւխէ ազատութեամբ շունչ քաշել և թեւերը արձակ բանալ, նա թերեւս մօտենայ ընթերցողի ախորժին, բայց կարող է հեռանալ բնագրից: Մի երրորդ տեսակ թարգմանութիւն էլ կայ, ուր թարգմանիչը սնուելով բնագրից, այնուհետեւ ինքն էլ ստեղծող է դառնում և ճարտար կերպով ձուլում է կաղապարը, հին նիւթը նոր ձևով, նոյն բանաստեղծութիւնը հայկական լեզուով, — այս արդէն հանճարեղութիւն է, և այսպիսի կտորներ ունի մեր թարգմանիչը, միւս կարգի կտորների հետ ի միասին:

Երբ որ ռուսն ասում է. Что-жъ, бѣлая лебедушки, притихли, նորա երեւակայութեան առջև իսկոյն պատկերանում է ազգային, ցեղական գեղեցկութիւնը, славянская красота, իւր բոլոր շքեղութիւններով. իսկ երբ որ հայերէն էք ասում. «Ինչո՞ւ էք դուք մունջ, սպիտակ կառապներ», այս բառերը մեր ահանջում հնչում են ցուրտ կերպով, լսողի սրտի լարերը չեն հնչեցնում, և նոյնքան նշանակութիւն են ունենում, եթէ փոխարէնը գրուած լինէր սիպսակ ջայլամներ, կամ նաև սիպսակ ոգնիներ, սիպսակ կեղզուրուներ, սիպսակ իխիոզաւրներ. բայց փորձեցէք ասել սիպսակ աղունակ-

ներ, փրուն մարայներ, քամրակի ֆուշաներ, և մեր Կրպո—Մկոնների աչքերը կը փայլեն, որովհետև նոցա գիտակցութեան մէջ կը նկարուին կենդանի պատկերներ: Ուրեմն կան բառեր, որոնք ահանջի չէմբռումն են մնում, և կան բառեր, որոնք թափանցում են մտքի և սրտի խորքերը: Եւ եթէ բառերը կարգացողի մէջ պատկերացումներ չեն զարթեցնում, այդ նոյն է, թէ նոքա լինէին օտար լեզուի, անծանօթ լեզուի բառեր:

Ապա լինում են այնպիսի դէպքեր, ուր թէպէտ բառերը պատկերացումներ առաջ են բերում, բայց նոքա լինում են սխալ պատկերացումներ: Երբ որ ռուսն ասում է. Чуть ласковой рукой по бѣлому лицу меня потреплетъ, իսկ հայն ասում է՝ «Հաղիւ սիրալիւր ձեռքով շփում է սպիտակ երեսս», երկուսը համահաստատ մտքեր չեն արտայայտում: Հայերէնը—բառարանից ընտրած, չոր ու ցամաք, ցուրտ բառեր են, բայց դարդոս արտաբերումներ չեն: Թերթեցէք մեր «ջան-գիւլումները», մի՞թէ այն տեղ էրուած, դադուած աղջիկն այդպէս կը զանգատուի: Թող նենք նախադասութեան ամբողջութիւնը և վեր առնենք հէնց միայն по бѣлому лицу—սխալակ երեսս: Արդեօք արանջողն իրօք իւր երեսի գոյնի մասին է խօսում,—դժուար թէ. գոնէ հայ նորահարսը այդպիսի դէպքում երբէք իւր երեսի գոյնի մասին ձայն չի հանի, այլ կը խօսէ վիճակի դառնութեան մասին, զոր օր, նա կողքայ իւր ջահիլ, ջիւան օտերի կորուստը, և երևի թէ բնագրումն էլ бѣлое նշանակում է МОЛОДОЕ. բայց որովհետև ռուսաց երգերի և հէքիաթների մէջ бѣлое մի տեսակ մնայուն, հաստատուն արտայայտութիւն է դարձել, այդ պատճառով վշտացած կինն էլ իւր մասին այդ բառը գործ կածէ, բայց ոչ թէ գոյն արտայայտելու համար, այլ դարձեալ հասակի մասադուրիւնը: Հիմա դանք գոյնի թարգմանութեան, Հայերէնում սխալակ աւելի նշանակում է սպրդնած, ուրեմն մեռելի գոյն: Հայ երգիչը աղջկայ երեսի, թշերի գոյնը դուրում է ալ, կարմիր վարդով, իսկ մարմնի սպիտակութեան համար գործ է ածում շարմաղ բառը:

Այս նկատողութիւններից ընթերցողն այն չպէտք է եզրակացնէ, իբր թէ մենք ուզում ենք, որ հիւսիսային սպիտակ կարապները թարգմանութեան մէջ Աշտարակի վարդիթերներ դառնային, այլ որ հայ թարգմանիչը միշտ յիշէ, թէ բառարանի բառերը խիստ նենդաւոր են, և մինչդեռ մենք մտադրվում ենք կենդանի ջահիլութիւնը ներկայացնել, այդ բառերով պատկերանում է անշնչացած ֆար, մարմարիոն: Ուրեմն մի սահման պէտք է դժել, թէ որ չափով կարելի է բնագրից հեռանալ, բայց այնպէս, որ բանաստեղծութիւնը չտուժէ: Այսպիսի սահման դնողը—հանճարեղութիւնն է. հետեւապէս այդ մասին էլ չենք խօսի:

«Յաւէրթահարսի» թարգմանողն այս բանը շատ լաւ է ըմբռնել, և շատ կտորներում ներում է իրան այնպիսի ազատութիւններ, որոնց պատճառով քաղաքացիական շարժումներն սերահարսների մազերը բիզ բիզ կարող են կանգնել, բայց մեր կարծիքով հէնց այդպիսի կտորներն են աւելի յաջող փոխադրութիւններ, Հատկեց բիշ օրինակ բերենք.

Такъ должно вамъ его себѣ упрочить—*կ' ամենեւին
մեռֆից լքողնեմք:*

Вы тотчасъ одурѣете—*խկոյն գժում եմք:*

Душѣ какъ будто легче—*կարծես սրտից մի քան վայր բն-
կաւ:*

Ребенокъ твой подѣ сердцемъ шевелнүлся—*կրծքիս քան
մանուկի խաղաց:*

Такъ бы я разорвала тебя, змѣю—злѣдѣйку—*այսպիս
կը պատռեի քեզ, անիծեալ օձ-կին:*

Այսպիսի ազատ թարգմանութիւնների գեղեցկութիւնը այնպէս լաւ զգալի չէ մի մի դուրս կտրտած նախադասութիւնների մէջ, վասն որոյ մենք առաջ կը բերենք մի ամբողջ կտոր, որ ընթերցողը, յոյս ունինք, ըստ արժանւոյն կը գնահատէ. Ահա մի թարգմանութիւն, որ կարծես թէ մեր լաւ աշուղների երգած է.

Խնամի ջան, խնամի,
Ա՛յ անցնորհի խնամի,
Հարս տեսնելու գնացիմք—
Բանջարանոց տուն մտնիմ,
Եւ մի տակառ զարեջուր
Ամբողջովին քափեցիմք,
Ողջ կապամբը ջրեցիմք:
Յանկապատին զլուխ տուիմք,
Աղօթք արիմք (մենք) դունիմ.
Դունիկ ջան, դո՛ւ, դունիկ ջան,
Դեհ, տուտ ցո՛յց տուր մեզ նամբան,
Հարս տեսնելու մեր նամբան:
Խնամի՛ ջան, զլիսի ընկիր,
Ձեռքդ շէքդ (դու) զցիր.
Ձեքիդ օսկին զընգալիս
Ի՞նչպէս ե մեզ դուր գալիս:

Եթէ մենք և դու դուրս ձգուին, վերջին նախադասութիւնն էլ փոքր ինչ փոփոխուի, և ցանկապատն էլ ծանր դպրական, զօրով փնտռած բառ համարուի, իսկ դուռն էլ, է՛հ, գէթ «դրախտի

գուռ» դառնար,—մենք կուենենանք մի յաջող թարգմանութիւն, և զալում աղջկերանց այն գիծ-գիծ ասածներն մէջ՝ միամիտ այլաբանութիւնն էլ կարմիր թելի պէս կը նշմարուի, որ այնքան էլ կուսական չէ և այդ պատճառով էլ խնամով ծածկուած:

Բայց մենք էլ չենք գովի թարգմանութիւնը. կարդացէք և ինքներդ վայելեցէք գեղեցկութիւնը:

Այս քննադատութեան նպատակն այլ է. Որովհետեւ քննութեան ենթակայ գործը լաւ գործ է, և ոչ միայն ամսագրի մէջ է մնում, այլ և առանձին տետրակով ժողովրդեան մէջ տարածվում է. երևի թարգմանիչը կուզենայ աւելի ևս մշակուած, ուրեմն և որբագրուած ընծայել նորից, որ շատ ցանկալի է, վասն որոյ աւելի մանրամասն ցոյց կը տանք մեր նկատած թերութիւնները:

Մեր թարգմանիչները երկու մեծ ոճիւր են գործում հայոց լեզուի գէմ, որին մասնակից է նաև «Յաւէրժահարսի» թարգմանիչը:

1. ոճիւր—աւելորդ բառերի գործածութիւն, կամ ճաշխարհ.

Թուտաց գրագէտները մեծ հոգսի մէջ են, թէ ինչպէս վերացնեն Ե, Ե տառերի գործածութիւնը, հաւատացնելով, թէ տպագրած իւրաքանչիւր տառնեակ էջից մի էջը միայն այդ աւելորդ և անպէտք տառն է բռնում: Ես այդ հաշուի ուղիղն ուսուտը չեմ ստուգել, բայց գիտեմ, որ հայոց լեզուն աւելի մեծ տագնապի մէջ է. նա ունի ոչ թէ աւելորդ բառեր, այլ ամբողջ բառեր, որոնք աջ ու ձախ կողմը սպիտակ անջրպէսներ ևս ունին: Հիմա թող թուաբանները հաշուեն, թէ մեր կորուստը ո՞րքան է տպագրած էջերի մէջ... Այդ դեռ անտեսական կորուստ էր. հապա մեր լեզուն ո՞րչափ խեցքեկ լեզու է դառնում. Հիմա այս էլ հաշուեցէք... Թող ասեն, թէ ես չափազանցութիւններով և հիպերբէլներով եմ խօսում, բայց և այնպէս պնդում եմ, թէ միևնույն ու մեր «դերանունները» լյադրուին, ռուսահայոց լեզուն փրկութիւն չունի. Թող կորչին դերանուններն ու միւս աւելորդները, և մեր թարգմանութիւնները կը գեղեցկանան:

Ինչ որ ռուս լեզուին ճահաւոր է, այն մեր լեզուին չի յարմարում: Երբ որ ռուսն ասում է

Я
ТЫ
ОНЪ } ПИСАТЬ

նա հարկադրուած է գործածել դերանունը, ապա թէ ոչ յայտնի չի դառնում, թէ ո՞վ ПИСАТЬ, իսկ հայը, փառք Աստուծոյ, շատ

սիրուն կերպով կարող է եօլա դնալ առանց գերանուան: Տեսէք ինչպէս սիրուն և կարճ է.

գրում էի

գրում էիր

գրում եր.

Մէջը բան պահա՞ս է: Ուրեմն էլ ինչ հարկ կայ շատ անգամ անտեղի և անպէտ կերպով խօսքը ձգձգել, ծանրացնել և ասել.

(Ես) գրում էի

(դու) գրում էիր

(նա) գրում եր:

Եթէ ընթերցողը համամիտ է մեզ, որ այս անպատեհութիւնը արդարեւ ոճիր է հայոց լեզուի դէմ, ապա թող իւր աչքով տեսնէ, թէ մեր գոված թարգմանութեան մէջ քանի աւելորդ եա, ար, օն և սրանց նմաններ կան, որ այժմ առանձին տետրակով ժողովրդեան մէջ էլ տարածվում են: Հետեւելում փակագծով () ցոյց ենք տալիս իւրաքանչիւր նախադասութեան աւելորդ, ջնջուելի բառերը, իսկ երբեմն սրբագրում ենք նաև ամբողջ նախադասութիւնը:

«Ե՞րբ եմ աշխատում (այդ) իշխանները»:

«Այն, ինչ որ այժմ (ես) կորցնում եմ»:

«Բեզ հաւատարիմ կը ծառայեմ (ես)»:

«Մի ասիր, (ես) չեմ հաւատում»:

«Գուցէ ուզում ես (դու) խօսի դուրս քաշել» — քերես ինձ փորձի ևս ուզում:

«Ի՞նչ պէ՞տք է արած, (դու) ինքդ դասիր»:

«Այս (մէկն) էլ տուր քո հօրը»:

«Պատրաստ եմ (ես) ողջ»:

«Գէթ նորա համար (դու) քեզ պահպանիր»:

«Գուցէ (ես) կը գամ եւ ձեզ կայցելեմ» — քերես գամ եւ ձեզ այցելեմ:

«(Ես) չեմ հաւատում, անկարելի է»:

«Իսկ (դու) լսե՞լ ես, (իմ) բոյրիկ ձկնիկ»:

«Պատուհանի տակ (ես) պիտի երջեմ»:

«Շատ հաւատարիմ ծառաներ եմ (դու)» — շատ հ. ծառայ քեզ եղի:

«Ինձ մի անյայտ ոյժ հրապուրում է (միտք)»:

«Նա իրան զցեց գէտը, վագեցի (նա) ետեւից»:

«Մերք նստում եմ (ես) գերեզմանի վրայ»:

«Իսկ փողը տուել եմ յաւերժահարսին, որ (նա) պահէ»:

«Սակայն (այն) մարդը, (որ) խելից գուրկ է» — սակայն խելից
 գուրկ մարդը:
 «Ի՞նչ եմ տեսնում (ես)»:

2. ոճիր—հարուստ ձեւերի չգործածութիւն, կամ գծածութիւն.

Այս վերնագրի տակ աւելի պէտք է հատկանալ բայի ստորագրատական կամ թէական եղանակը և բարդ ժամանակները, որոնց տեսակները կամ չկան ուրիշ լեզուներում, կամ այլապէս են արտայայտուում, իսկ մեր թարգմանիչները մինչև այսօր չեն գտնում լեզուների համեմատական շուգակշիռը կամ զուգընթացները: Թարգմանութեան մէջ այսպէս ազգատօրէն վարուել՝ նշանակում է—լեզուից խել իւր բուն սնունդը: Թողէք այդպիսի գծութիւնը, ժլատութիւնը, և մեր լեզուն միւս և արեւն կը ստանայ, ջղոտ և կորովի կը դառնայ: Ահա և «Յաւէրժահարսից» օրինակները.

«Թե՛ մեզ պատահեց մի նախանձելի...» — ր. ձ. պատահի մ. ն.

«Թե՛ կարողանաս ... խնդրել իշխանից» — ա. յ. րե՛ կարողանալիք խ. ի.

«Բայց ամուսնութեան րե՛ կ յոյս չկայ» — ր. ա. րե՛ կ յոյս չիմի.

«Թե՛ ձին քեզ գցեց» — ր. ձ. ք. գցել ք.

«Արդեօք այդպէս վաղ սպասում էի» — ա. ա. վ. կը սպասէի.

«Որովհետեւ դու շատ բարի էիր» — ո. դ. շ. բարի ես եղել.

«Եւ քո աղջկան քոյլ էիր տալիս» — եւ. ք. ա. քոյլ ես տուել.

«Հաւատարիմ ծառանք եմ դուք» — հ. ծ. հ. դուք.

«Նա երեկոյեան խնդրեց ինձ գնել» — ն. ե. խնդրել եր ինձից գնել.

«Արջը սպանեց» — ար. ի ճանկից լեւ պրծել.

Մենք խօսեցինք ոճերների մասին, իսկ ո՛րքան լանցանքներ ենք գործում մեր լեզուի դէմ լսի միայն անուշադրութեան և դձեհիկ անփութութեան պատճառով: Այդ բոլորը մենք կարող էինք զանազան անունով մի վերնագրի տակ խառնիխուռն շարել, բայց աւելի լաւ է, որ նոցանից գէթ մէկ խումբը ջոկուի և առանձին ներկայացուի: Այդ խմբին կը տանք, թէ և ոչ բոլորովին ճիշդ, այս կարճ անունը.

Նախադասութեան անդամների Եփօրութիւն.

«Անշատում է մեզ նախադիրը սահմանել» — Առաջին տեսութեամբ, այնպէս է բուռն, իբր րե՛ անշատում է բայ է նախադասութեան մեջ, մինչդեռ բայն է — սահմանել:

Այս շփոթութիւնը մանաւանդ մեզ դիտանումն պատճառով է առաջանում, որ իւր տեղը չէ դրած: Երբ նախադասութիւնն այսպէս ձեւանաւ, *նախադասութիւնը մեզ անցատու է սահմանել, քակէ բիւրիմացութիւնն իսպառ չէր վերանայ, բայց զէր շուտ կը փարատուէր շփոթութիւնը: Ապա երբ մի և ճառ աւելացնենք, շատ բան կը դրսուի, քակէ գրաբարաձեւ դուրս կը գայ (ո՛հ, ինչ ոնիր). անցատու է մեզ և՛ սահմանել: Իսկ ամենից լաւն այն է, որ նախադասութիւնը կանոնաւորուի այսպէս. *նախադասութիւնը մեզ սահմանել է անցատու:**

«Ի՞նչու խօսելու շնորհ է տւած» — ի զուր խօսելու, քէ ի զուր է տւած, ի հարկէ վերջինը. այն ժամանակ պէ՛տ է դարձուածք փոխուի այսպէս. *խօսելու շնորհքը ի զուր է տւած:*

«Որ իշխանուհուն յանձնենք ամուսնուն» — իմանալի չի դառնում, արդեօք *իշխանուհին յանձնուի ամուսնուն, քէ ամուսինը՝ իշխանուհուն:*

«Շուտով մոմ վառիր» — ոչ քէ ցորո, այլ ցորե՛ն. ժամանակի կարծութիւնը յայտնում ենք այսպէս. *շուտով գալու է գարունքը, շուտով վերջանալու են մեր վեճերը. իսկ ժամանակի արագութեան համար մենք ունինք շուտ բառը, ուրեմն շուտ մոմ վառիր:*

«Ո՞ւմ մեջ այդքան գանձ նա պիտի գտնի, երբ ոչ քէ մեջ» — Փոխանակ *այդքանի, պէ՛տ է ասուի այնքան: Խնդրում ենք չնչին բան չհամարել մի դայի փոխարէն մոռնելը: Երբ որ ասում եմ այդքանը ում մէջ գտնի, նշանակում է, քէ խօսակցից՝ ուրեմն իշխանուհուց՝ դուրսն եմ փնտրում գանձը, բայց այն ժամանակ անհետքութիւն է նախադասութիւնը վերջացնել երբ ոչ քէ մեջ բառերով: Իսկ երբ ասեմ այնքան գանձը ում մէջ գտնի, երբ ոչ քէ մեջ, խօսակցին էլ մըտնում է հաւաքական օրջանի մեջ, եւ նախադասութիւնը կը լինի ուղիղ:*

«Ետեղն, նա գժուել է» — պէ՛տ է ասել՝ *սա գժուել է: Ռուսը, երբ որ իւր կէտին գժուածին տեսնում է, իրաւունք ունի ասել ОНЪ ПОМѢШАНЪ, բայց հայն այդ իրաւունքը չունի, որովհետեւ հայերէնը նուրբ կերպով գանազանում է սա: դա, նա: որոնց բոլորի համար ուրեքներ ОНЪ է. — Ես ավստոսում եմ, որ հենց սկզբից*

մի *հրորդ*, ոմիւ չանուանեցի սա, դա, *նայի* չգործա-
ծութիւնը մեր քարգմանիչների կողմից:

«Դուք բոլորդ յիմար եք» — պէտք է ասել՝ *ամենիդ* յիմար եք: Շատ
անգամ իմաստի նրբութիւնը պահանջում է որոշել
հատման՝ *անջատման*ից:

«Դու գիտես, որ ես բոլորի վրայ նայում եմ մասերի արանքներով»:
— Այստեղ էլ պէտք է նոյն պատճառով ասուի՝ *ամեն*
քանի վրայ կամ *նորա արարների* վրայ:

(Կը շարունակուի):

Ս. Ս.

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Մ

«Գիրք Թղթոց»-ի ՊԱԿԱՍՆԵՐԸ

ԵՒ

ՆՐԱՆԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱՄ ԹՂԹԵՐ.

Անցեալ տարի Տփլիսում լոյս տեսաւ «Գիրք Թղթոց»
անունով յայտնի մի ժողովածու, որ ինչպէս նկատել է Արթ.
Խաչիկ վարդապետը (Արարատ 1896 թ. 23 էր.) ըստ Օրբե-
լեանի առութեան, ժողովել է տուել Անանիա Մոկացին,
հակառակ «Գիրք Թղթոց»-ի յառաջարանում արած այն
ենթադրութեան, թէ Սանեցին պիտ ժողոված լինի առա-
ջին անգամ: Այս հրատարակութիւնը, ինչպէս նրա յա-
ռաջարանում էլ ասուած է, պարզապէս ընդօրինակութիւն
է Անտոնեան միարանութեան մի յայտնի հին զբաղրից, որ
որքան և ընտիր, բայց և ունի թերութիւններ՝ պակաս
բաւեր, ընկած թերթեր և այլն: Հարկաւ շատ պիտի ցա-
ւէինք, որ այդպիսի մի ընտիր պատմական աղբիւր թե-
րատ է հասել մեզ, եթէ բարեբախտաբար այդ պակասը
լրացնել կարելի չլինէր Մայր Աթոռի ձեռագրաւանից: Այս-
տեղ, բացի զանազան ձեռագիրներում ցրուած թղթերից,